ԶՕՐԱՎԱՐ.– Թագաւոր քաջ: Արդեօք զօ՞րք կապենք, թէ՞ դարձեալ դու մենակ անձնական զօրութեամբդ կխորտակես հանդուգն թշնամուն: Ինչպէ՞ս կիրամայես:

ՆԱԶԱՐ.– Ի՞նչ պիտի հրամայեմ: Գնացէք կռուեցէք:

ԶՕՐԱՎԱՐ.– Ինչպէ՞ս, մե՞նք կռուենք, թագաւոր քաջ:

ՆԱԶԱՐ.– Բա ի՞նչ, ե՞ս պիտի կռուեմ:

ԶՕՐԱՎԱՐ.– Թագաւոր քաջ, ես ուզում եմ ասել, որ դու կառաջնորդես, եւ զօրքը հետեւից կգա:

ՆԱԶԱՐ.– (Շվացնելով) Էհեո՛ւֆ… պրծա՛ւ: Էլ Նազարը կռիւ չի՛ գնա: Ոնց որ կուզէք՝ արէք:

ԶՕՐԱՎԱՐ.– Քաջ հրամայեցիր, թագաւոր քաջ: Բայց եթէ դու չգաս զօրքը մենա՞կ պիտի գնա թշնամու դէմ:

ՆԱԶԱՐ.– Թող մենակ գնա: Ամեն անգամ ե՛ս պիտի գնամ:

ՆԱԶԻՐ.– Թագաւորն ապրած կենա: Այստեղ մի դժուարութեան կա:

ՆԱԶԱՐ.– Ի՞նչ դժուարութեան:

ՆԱԶԻՐ.– Զօրք շատ կջարդուի:

ՆԱԶԱՐ.– Ջարդւում է՝ ջարդուի, շատ վեջս է:

ՆԱԶԻՐ.– (Ուրախացած) Օհ, թոյլ ես տալի՞ս…

ԲՈԼՈՐԸ.– (Սաստիկ ուրախացած) Երջանիկ բան եղաւ:

ՆԱԶԻՐ.– Այսպէս առնուազն քառասուն հազար մարդ կջարդուի:

ՆԱԶԱՐ.– Քառասուն հազա՞ր: Լաւ, մեր աշխարհքում ինչքա՞ն մարդ կա, թէ որ էդքանը ջարդուի:

ՎԵԶԻՐ.– (Թղթակալը բանալով եւ նայելով) Ուղիղ հարիւր հազար բիւր եւ հազար ինը հարիւր հինգ մարդ:

ՆԱԶԻՐ.– Որ էդպէս է թող ջարդուի: Գնացէք ասէք թող կռուեն:

ԲՈԼՈՐԸ.– (Սաստիկ ուրախ) Աստուած պահի թագաւորին:

(Գլուխ են տալիս եւ հեռանում):

Դուրսը լսւում են փողերի ձայներ, ռազմական շռինդ, աղմուկ, կեցցեներ, մունետիկի ձայնը. «Պատերա՛զմ»… եւ այլն, որ հետզհետէ դադարում է:

ՆԱԶԱՐ.– Հա, թագաւորական պարտքս կատարեցի: Հիմի թող նրանք կռուեն, մենք մեր քեֆին նայենք: (Դէպի դուրս) Է՛յ, գեադա՛: (Սենեկապետը ներս է գալիս) Գնա թագս բեր, մի քիչ էլ չարազ բեր: (Սենեկապետը գնում է: Թիկն է տալիս բարձերին) Էո՛ֆ… (երգում է) Ա՛ման, ամա՛ն… այ ջաա՛ան… Հը՞: Ոստիան, թագուհի դառար՝ հիմի ո՞վ